

ԺԱՆՊԻՆՈՒ ՄԱՀԵ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ԱՊԱՐԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

2015 թվի ապրիլի 12-ին, Հայաստանյայց եկեղեցու երեք կաթողիկոսների ներկայությամբ, Հռոմի պապ Ֆրանցիսկոսը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը և հռչակեց Սուրբ Գրիգոր Նարեկացուն «Համաշխարհային եկեղեցու վարդապետ»:

Այդ կոչումը ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր բացառիկ նշանակություն ունի:

Այդ նշանակությունը սերտ կապ ունի Հայոց ցեղասպանության ճանաչման հետ: Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայ բնակչությանը իսպառ բնաջնջելով, երիտթուրքական զազանը նպատակ ուներ նաև հայկական բազմադարյան քաղաքակրթությունն արմատախիլ անել:

Եվ ահա սուրբ Գրիգոր Նարեկացին այդ քաղաքակրթության գագաթներից մեկն է հանդիսանում: Նրա ստեղծագործությունները ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեք ունեն: Չարենցի խոսքով, «Նարեկացու պես լուսապսակ ճակատ չկա»: Նարեկի սրտից բխած գոհարները հայ ժողովրդի անխզելի ժառանգությունն են և միաժամանակ համամարդկային մտքի, մտածողության գանձեր են:

Հետևաբար, այսօրվա աշխարհում ևս, Հայաստանի կշիռը չպետք է չափել բացառապես աշխարհագրական և տնտեսական տվյալների հիման վրա, այլև Գրիգոր Նարեկացու չափանիշով: Այդ տեսանկյունից Հայաստանը նույն մակարդակն ունի, ինչ Շեքսպիրի, Գյոթեի, Դոստոևսկու կամ Հյուգոյի հայրենիքները:

Մեկ հազարամյակի ընթացքում «Մատեան Ողբերգութեան»-ն անընդհատ կարդացվել է բազմիցս ուսումնասիրվել է, իսկ 1961 թ. ի վեր Իսահակ Քեշիշյանի լիակատար ֆրանսերեն թարգմանությունից¹ հետո, թարգմանվել է շատ լեզուներով և օտարազգի ընթերցողներին մատչելի դարձել: Ուստի և, այսօր Մատյանի մասին չեմ խոսի, այլ կանդորադառնամ անբավարար մեկնաբանված Գրիգոր Նարեկացու մի գրությունը՝ «Ապարանքի Սուրբ Խաչի պատմություն»-ը²:

¹ Grégoire de Narek, *Le livre de Prières*. Introduction, traduction de l'arménien et notes par Isaac Kéchichian, avec une préface de Jean Mécérian (Sources chrétiennes n° 78), 1961.

² Գրիգորի Նարեկայ վանից վանականի Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին, Մատենադիրք հայոց, ԺԳ հ., Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Եր., 2011, 913-929 (ստորև § և թվերով վկայակոչվում են սույն հրատարակության համարակալված նախադասությունները):

Այդ երկը հավասարվում է Մատյանին ուժեղ, հուզիչ, փայլուն քերթողական ոճով, բայց նյութը բոլորովին տարբեր է, առնչվելով ո՛չ միայն աստվածաբանության, այլև Վասպուրականի, Բյուզանդական կայսրության և հայ արվեստի պատմությանը: Բառաբարդումներով հագեցած Նարեկացու երկարաշունչ նախադասությունները հաճախ մշուշապատ են, երբեմն էլ առեղծվածային և խորհրդավոր: Թարգմանելիս մեզ մեծապես օգնել են երջանկահիշատակ Մխիթարյան գիտնականի՝ Գաբրիել Ավետիքյանի մեկնաբանություններն ու ծանոթագրությունները:

Իմ հերթին, Ֆրանսերեն թարգմանություն կատարելիս, մի շարք հանելուկներ լուծեցի, որոնցից մտադիր եմ այսօր մի քանիսը ներկայացնել:

Առաջինը վերաբերում է գրության թվականին: Մոտավորապես 951 թվին, Տարոնին հարակից Մոկաց գավառում վախճանվեց Ապարանքի առաջնորդը՝ իշխանագն Դավիթ եպիսկոպոսը: Նա թաղվել է իր կառուցած Սբ. Կարապետ եկեղեցու գլխավոր սեղանի տակ, իսկ շուտով նրա գերեզմանի հողը պատճառ դարձավ հրաշագործ բուժումների, ուստի և 976 թվականին, երբ որ Մոկաց իշխանը ստիպված հեռացավ հայրենի գավառից և Պոլիս գնաց, իր հետ տարավ սքանչելագործ հողից: Լսելով կատարվող հրաշքների համբավը, կայսրերը՝ Բարսեղը և Կոստանդինը, ցանկություն հայտնեցին Ապարանքի ուխտին բացառիկ մի նվեր անել: Մոկաց իշխանը և սուրբ Դավիթի հաջորդը՝ Ստեփան եպիսկոպոսը, Քրիստոսի Սուրբ Խաչի մի մասունք ուզեցին:

983 թ. Ավագ Ուրբաթ օրը թանկագին նշխարքը Ապարանք բերվեց շքեղ խաչաձև մասնատուփում: Նախ դրեցին այն Դավիթի շիրիմին մոտ, Սբ. Կարապետ եկեղեցում, իսկ դրանից մի քանի տարի անց նորակառույց Աստվածածին տաճարում: 983 թ. տոնակատարությանը ներկա էին Վասպուրականի արքաները, որի ընթացքում կարդացվեց Գ. Նարեկացու հեղինակած նվիրատվության պատմությունն, ինչպես նաև Սուրբ Խաչի ներբողը:

Սակայն զարմանալին այն է, որ այսօր մեր ունեցած բնագիրը հիշատակում է այնպիսի դեպքեր, որոնք պատահել են 983 թ. երկար ժամանակ հետո, առնվազն՝ մինչև 995 թ.:

Առեղծվածի լուծումը հետևյալն է: Մոտավորապես 992 թ. մահացավ Գր. Նարեկացու սիրելի ուսուցիչը՝ Անանիա Նարեկացին: Նարեկավանքի նոր Աբբահայր ընտրվեց Սբ. Գրիգորի ավագ եղբայրը՝ Հովհաննեսը: Վերջինս իր պաշտոնի հեղինակությունից օգտվեց պահանջելու համար, որ իր եղբոր բոլոր երկերը ընդօրինակվեն և ամբողջանան: Այն ժամանակ սբ. Գրիգորն արդեն ներբողներ, գանձեր, տաղեր և Մատյանի շատ ճառեր էր հորինել: Բայց այդ երկերից ո՛չ մեկը, բացի Արծրունի թագավորների պատվերով գրած «Երգ երգոցի մեկնություն»ից և Ապարանքում արտասանած ճառերից, երբեք Նարեկավանքից դուրս չէր եկել:

Հետևաբար Գրիգորը, Հովհաննեսի թելադրանքով և աջակցությամբ, իր երկերը համախմբեց երեք ժողովածուներում: Սրանք են. Ներբողները (995 թ.), Գանձերն ու Տաղերը (998 թ.) և «Մատեան ողբերգութեան»-ը (1002 թ.): Երեքը, կապված լինելով իրար հետ, վերը նշվող հոգևոր ճանապարհի երեք փուլերն են կազմում: Առաջին երկու ժողովածուները վերաբերվում են «արտաքին մարդուն», այսինքն մարդկային վարքին, տեսանելի գործունեությանն ու ընթացքին: Իսկ երրորդը՝ «ներքին մարդուն», այսինքն ներքին ընթացքին ու հոգևոր պատմությանը, որը բխում է սրտի խորքերից:

Ըստ այդմ, ներբողները գտնվում են վերելքի սկզբին, ձգտում են Քրիստոսի և սրբերի մասունքներին պատիվ մատուցող տոնախմբությունների առաջադրած զմայլանքն ու հուզմունքը իսկական բարեպաշտության վերածելու: Գանձերն ու տաղերը, հարստացնելով ամբողջ ծիսակատարությունները, նպատակ ունեն դրանց մասնակցող հավատացյալներին գիտակից դարձնել տոնի աներևույթ գանձերին: Այդ պատճառով, ամեն մի տոնի կանոնը սկսվում է «գանձ» բառով: Իսկ «Մատեան Ողբերգութեան»ը ձեռնարկում է «ներքին մարդուն» կառուցելու համար:

Այդ եռապատիկ ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ էր ո՛չ միայն գոյություն ունեցող բոլոր բնագրերը հավաքել և դասել, այլև դրանք համալրել՝ հորինելով պակաս եղածը: Ուստի և պետք է ենթադրել, որ այդ համալիրի շեմին կանգնած եռագրությունը՝ Ապարանքի Սուրբ Խաչի պատմությունը և նրան կցված երկու ներբողները, բավականին վերամշակվել և համալրվել են:

Նշենք միայն այն փաստը, որ բնագրում հանգամանորեն (§ 70-114) նկարագրված Սուրբ Աստվածածնի տաճարը գոյություն չունեի 983 թ., երբ որ ճառը առաջին անգամ ընթերցվել էր: Նմանապես, Պատմության առաջին մասը՝ Բարսեղ և Կոստանդին կայսրերի գովեստը, գրած պետք է լինի Բուլղարների դեմ տարած առաջին վճռական հաղթանակներից հետո, այսինքն՝ 995 թ. ոչ առաջ: Հետևաբար, այսօր մեր ունեցած բնագիրը պետք է համարել ոչ թե Նարեկի սկզբնական խմբագրությունը, այլ դրա 995 և 998 թթ-երի թվականներին համալրված տարբերակը:

Տեսնենք հիմա մի երկրորդ հանելուկ: Գրիգոր Նարեկացին իր դրվատած Մոկաց իշխանի անունը չգիտի: Կոչում է նրան «մեծ մանգլավիտ» (§ 62), ինչը ո՛չ մի դեպքում հատուկ անուն չի կարող համարվել: Այն ժամանակ «մանգլավիտ» բառը օրերիս «մանկլավիկների» վարկաբեկիչ համբավը չունեի, այլ նշանակում էր բյուզանդական կայսրերի շնորհած զինվորական մի պատվավոր կոչում: Իշխանի բուն անունն էր Զափրանիկ, ինչպես իմանում ենք Ստեփանոս Ասողիկից:

Արդ, պետք է հարցնենք, թե ինչպես կարելի է բացատրել, որ Գրիգոր Նարեկացին Ապարանքի Սուրբ Խաչը բերող Զափրանիկի անունը չգիտեր, եթե իրեն անձամբ հանդիպած և ողջունած պետք է լինեի տոնակատարության ժա-

մանակ: Այդ հարցին կարելի է միայն մեկ պատասխան տալ: Նարեկացին այդ օրը Ապարանքում չի գտնվել և Զափրանիկ Մոկացու հետ երբեք չի տեսակցել: Պատմությունը գրել է ոչ թե անձնական փորձառությունից ելնելով, այլ Նարեկավանքում, Մոկաց եպիսկոպոսի պատվերով, իրեն ուղարկված գրավոր տեղեկությունների հիման վրա: Բանն այն է, որ վաղ միջնադարյան օրենքով, աբեղան պարտավոր էր սկզբունքորեն իր վանքից չհեռանալ, եթե աբբահայրը չհրամայեր:

Երրորդ հանելուկը կարծես թե ինքը՝ Նարեկացին է մեզ առաջարկել, որպեսզի աշխատենք այն լուծել: Այդ վերաբերվում է Մոկաց եպիսկոպոսի և Ապարանից առաջնորդի՝ Ստեփանոսի երկրորդ անվանը: Նարեկացին անդրադառնում է այդ հարցին երեք անգամ (§ 65, 66, 101), նկատելով, թե Ստեփանոսը երկու անուն ունի, բայց հստակ չի ասում, թե ինչ է երկրորդ անունը:

Նախ և առաջ նկատենք, թե երկու անուն ունենալը Արծրունի թագավորների դեպքում բնականոն մի երևույթ է: Գրիգոր Նարեկացին հիշատակում է Աշոտ-Սահակ, Գուրգեն-Խաչիկ և Սենեքերիմ-Հովհաննես Արծրունիներին (§120-121): Այդ հանգամանքի բացատրությունը պարզ է, առաջին անունը ազգատոհմի հնամյա հեթանոսական ծագումը ոգեկոչող ծննդյան անունն է, իսկ երկրորդը՝ մկրտությունը:

Ստեփանոս եպիսկոպոսի հանգամանքը տարբեր է: «Պսակ նշանակող առաջին անունը՝ Ստեփանոսը, նա ընդունել է մկրտության ժամանակ, իսկ երկրորդ անունը՝ հոգևորական ձեռնադրության առիթով: Արդ, Սուրբ Գրիգորը կոչում է եպիսկոպոսին «Սիոնի պսակ» և «Հիսուսի ծառա» (§ 101): «Սիոնի պսակ»ը համապատասխանում է «Ստեփանոսին»: Հետևաբար, պետք է կարծել, թե «Հիսուսի ծառա» երկրորդ անվան բացատրությունն է:

Հաշվի առնելով, որ Վասպուրականը, հատկապես Մոկաց գավառը կից էր Միջագետքի ասորիներին, կարելի է մտածել ասորերեն անձնանունի մասին: Բառացի թարգմանությունը «Աբդիշոյ» կլիներ: Բայց ավելի հավանական է թվում, թե Ստեփանոս եպիսկոպոսի ձեռնադրության մականունն է եղել Ապղլմսեհ: Ի դեպ, Ապարանքի համալիրն ընդգրկում էր «Եբրայեցի ընտրյալ պատանու՝ Մարտիրոս Ապղլմրսեհ»-ի (§ 111) մատուռը:

Պարսկաստանի Սինգար քաղաքից հրեա հովիվը՝ Ասերը, Ալիի որդին, մկրտվել էր Ապղլմրսեհի անունով 553 (կամ 384) թվին: Այդ պատճառով սպանվել է հոր ձեռքով և մասունքները տարվել են Հայաստան քրիստոնյա հայ վաճառականների կողմից: Ապարանքում պահվում էր Ապղլմրսեհի բազուկը, որը XI դարում տեղափոխվեց Աղթամար: Այն ժամանակ մայր տաճարի առաջնորդն էր Աբդլմրսեհ եպիսկոպոսը, նահատակ թոռնիկ Արծրունու որդին³:

³ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն տանն Արծրունեաց, քննական բնագիրը Գ. Տեր-Վարդանեանի, Մատենագիրք հայոց, ԺԱ հատոր, Ժ դար՝ Պատմագրություն, Գիրք Ա, Անթի-

Սուրբ Խաչի մասունք ստանալը երկարատև և նուրբ դիվանագիտական սակարկումներ պահանջեց: Նարեկացին գրում է, թե ճարպիկ և պերճախոս Մովսես իշխանը՝ Ջափրանիկը, Ստեփանոս եպիսկոպոսից և կայսրերից ուզեց և ստացավ ինքնագիր հրովարտականեր, որոնք սուրհանդակի միջոցով նպատակին հասցրեց, նախ Կ.Պոլիսից Ապարանք, իսկ հետո Ապարանքից Կ. Պոլիս (§54-56):

Սակայն դա պետք է համարենք համաձայնության վերջին փուլը: Դրանից առաջ ոչ պաշտոնական թղթակցություն է եղել Ստեփանոս եպիսկոպոսի և Ջափրանիկի միջև, ինչպես նաև վերջինս անձնական տեսակցություններ է ունեցել Բարսեղ կայսեր հետ:

Բնագրի հանելուկներից շատերը լուծվում են Աստվածաշնչի մեկնաբանությունամբ: Օրինակ, Գրիգորը գրում է, թե կայսրերը ապստամբ ժողովուրդներին՝ վրացիներին, խազարներին, ճեներին և հայերին (§ 21) «հաստ և հաղթող բազուկով ըմբռնեցին», ըստ օրինակի հին մարգարեների՝ Համբակումի և Ջաքարիայի: Աստվածաշնչի ընթերցողները գիտեն, թե Համբակումի մազերից բռնած մի հրեշտակ նրան Դանիելի վիրապի վրայով տեղափոխեց Բաբելոն (Դան. ԺԳ 33-34): Դրա քանդակը կա Վրաստանում՝ Ատենիս Սիոնի արևմտյան պատի վրա, հայերեն վիմագրությունամբ: Իսկ Ջաքարիան տեսիլք տեսավ, թե ինչպես Տեր Աստված մեկնած ձեռքով Իսրայելին հալածող ազգերին է սպառնում (Ջաք. Բ 13):

Այլուրեք, պատմելով Դավիթ եպիսկոպոսի դաստիարակության մասին, հեղինակը գրում է, թե շատ վարժություններից հետո երանելին հասավ լիակատար կատարելության «Եփրեմի լեռան զորավոր հսկողի պես»: Ո՞վ է այդ հսկողը: Մենք պետք է իմանանք: Կարծեմ, թե հսկողի անվան տակ պետք է Սամվելին հասկանալ, որովհետև Սամվելը Եփրեմի լեռից է եկել (Իմ. Ա 1): Ըստ Մատթանի (ՁԸ Ա), սուրբ Գրիգորը բարձր է գնահատել Սամվելին՝ կոչելով նրան «մարգարէ» և «ամենատես»:

Կարելի է լուսաբանել Սուրբ Խաչի պատմության ուրիշ մթին հատվածներ: Սակայն ուզում եմ հիմա անդրադառնալ կենտրոնական թեմային, այսինքն՝ Սուրբ Խաչի մասունքի ոչ միայն կրոնական, այլև քաղաքական և խորհրդաբանական արժեքին:

IX դարում, այսպես կոչված «Մակեդոնյան» կայսրերի հաստատվելուց ի վեր, Քրիստոսի մասունքները համախմբվում են Կոստանդնուպոլսում, կայսերական Պալատի Փարոսի Սուրբ Աստվածածնի եկեղեցում: Վաղուց այնտեղ երկրպագվել էին Սուրբ Գեղարդը և Սուրբ Խաչը: 944 թ. բերեցին նաև Ուոհայի

լիա-Վիբանան, 2010, էջ 341, Thomas Artsruni, *History of the House of Artsrunik*, translation and commentary by R. W. Thomson, Detroit, 1985, pp. 372-374:

մանդիլիոնը: Իսկ Արևելքի բյուզանդական վերագրավումը առիթ հանդիսացավ նոր մասունքներ հայթայթելու: Բոլորը հավաքվեցին մայրաքաղաքում, որ դարձել էր կայսրության վերակառուցման խորհրդանիշ: Քրիստոսի մասունքները հնարավորություն են տալիս միաժամանակ հաղթանակ տանելու («Այդ նշանով կհաղթես»), դաշնակիցների հավատարմությունը երաշխավորելու (իրենց մասունքի բեկոր նվիրելով) և այդպես տրված երդումների անկեղծությունն ամրապնդելու⁴:

Ահա այս շրջանակում պետք է ըմբռնել Ապարանքին ուղղված կայսրերի նվիրատվությունը: Մեկ կողմից խաչածե մասնատուփում զետեղված Քրիստոսի և Աստվածածնի թանկագին 7 նշխարները (§ 60, 135) քաջալերանք էին հանդիսանում Վասպուրականի եկեղեցու ճկուն վերաբերունքի՝ Բյուզանդական եկեղեցու նկատմամբ: Արծրունի թագավորների գրաված դիրքը քրիստոսաբանական հարցերի վերաբերյալ խիստ տարբերվում էր Անանիա Մոկացի կաթողիկոսի և Բագրատունյաց թագավորության անգիշտությունից:

Մյուս կողմից, Սուրբ Խաչի հանդիսավոր ընդունելությունը Վասպուրականի երեք թագավորների կողմից, քաղաքական նշանակություն ուներ: Այն նշանակում էր կայսերական գերիշխանության որոշակի ճանաչում: Չմոռանանք, որ 983 թ. ներկա գտնվող Ռշտունյաց իշխանը՝ Սենեքերիմ-Հովհաննեսը (§ 120-121), հետագայում Վասպուրականի այն շահնշահը դարձավ, որը համաձայնվեց թագավորությունը 1021 թվին զիջել Բյուզանդիային՝ «Ասպրականի» կատեպանությունը ստեղծելու համար:

Ի՞նչ է եղել Գրիգոր Նարեկացու անձնական կարծիքն այդ դեպքերի մասին: Եթե մի կողմ դնենք ներբողի ժանրին հատուկ դրվատանքները, բավականին հստակ երևում է, թե Նարեկացին ավելի շուտ ուշադրություն է դարձնում բյուզանդացիների միջամտության եկեղեցաբանական նշանակությանը, քան քաղաքական հանգամանքներին:

Օրինակ, մեջբերենք Գրիգորի հորինած Կ. Պոլսի հակիրճ ոգեկոչումը. «(Մոկաց իշխանը հասավ) մինչև հեռավոր ծայրը Ասիայի և սկիզբը Իտալիայի, Դալմատների նոր ոստանում, երոմածին հույների արքունիքում, ծովածավալ հրափակ, անդնդափոս, ահագնապարիսպ բազմաբնակ քաղաքում և անմատչելի ամրոցում, Կ. Պոլսում» (§ 42):

Թեպետ այդ հատվածից որոշ բառեր քաղված են «Աշխարհացույց»-ից, բայց կայսերական մայրաքաղաքի պատկերը բոլորովին անիրատեսական է: Ավելի ճիշտ վախճանաբանական տեսիլքի պես է հնչում: Պոլիսը պատկերվում է որպես վերջին ժամանակների մեծաքաղաք: Այն կանգնած է երկու ցամաքների անդնդափոր եզրին, այնպիսի վայրում, որտեղ երկիրը և ծովը խառնվում

⁴ St'ou Durand (Janic) & Flusin (Bernard), *Byzance et les reliques du Christ*, Paris 2004 (Association des Amis du Centre d'Histoire et Civilisation de Byzance):

են իրար: Այնտեղ են խուժում ջրհեղեղից և Բաբելոնյան աշտարակից ի վեր ցանուցիր եղած ամբողջ աշխարհի ժողովուրդները: Այդ երևույթը կարծես գուշակում է ահեղ դատաստանի համար մարդկային ազգերի համախմբումը:

Մինչ այդ Բյուզանդական կայսրության աստվածադրոշմ առաքելությունն է «երկնորեն լայնությամբ ամենահաս թևերը ձգելով, ամբողջ աշխարհիս անհուն տարածության մեջ ապրող ամբոխները հավաքել մեկ հոտի պես մի խմբում, մեկ սյունհողոսի պես մի եկեղեցում, մեկ հարսի պես մի առագաստում, մեկ ամուսնու պես մի տաղավարում, մեկ ընկերոջ պես նույն վերմակի տակ, մեկ զուգակցի պես նույն խորանի խորհրդարանում» ևն (§ 18): Մի խոսքով, Նարեկացին նույնացնում է հունական եկեղեցին կաթողիկեին, այսինքն համաշխարհային եկեղեցուն:

* * *

Ֆրանսիական գրականագիտության հայրը՝ Շառլ Սենտ-Բյուվը (*Charles Augustin Sainte-Beuve*) գրել է, թե հանճարեղ հեղինակի անդրանիկ գլուխգործոցը պարունակում է արդեն իր ապագա ստեղծագործության բոլոր երախայրիքը, «Ապարանքի Սուրբ Խաչի պատմությունը» ոչ միայն Նարեկացու հանճարի առաջին արգասիքն է, այլև իր երեք մեծ քերթվածների կոթողային դարպասը: Այն փայլում է ոչ միայն Նարեկի քերթողական ոճով, այլև այն հազվագյուտ գրություններից է, որոնցում տեսնում ենք, թե ի՞նչ պատմական միջավայրում է հեղինակն ապրել: Նման տեղեկություններ գտնում ենք միայն Մատյանի հիշատակարանում:

Սուրբ Խաչի պատմությունը կարդալով հասկանում ենք նաև, որ Նարեկացին Վասպուրականի թագավորության հարազատ ծնունդ և քաղաքական-մշակութային միջավայրի արդյունք է: